ՀՀ-ում Մտավոր սեփականության իրավունքների կիրարկման հզորացում

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ: առևտուր
Տևողությունը: 32 ամիս
Իրականացման ժամկետ մարտ 2012 - հունիս 2014
Բյուջե: 1 մլն Եվրո

Շահառու մարմին : ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, մտավոր սեփականության գործակալություն

ԵՄ անդամ երկրի գործընկերներ:

Գլխավոր գործընկեր՝ Դանիայի արտոնագրերի և գրանքային նշանների գործակալություն, Դանիա
Կրտսեր գործընկեր- Եվրոպական հասարակական իրավունքի կենտրոն, Հունաստան

Ծրագրի նկարագիր

Նպատակ: Սույն ծրագրի հիմնական նպատակն էր աջակցել Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքների կիրարկման համակարգի հզորացմանը՝ հասարակության ինստիտուտների, անհատական կազմակերպություններիևհանրության լայն շրջանակի ներգրավմամբ, ինչպես նաև նպաստել մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ համապատասխան հաստատությունների և ընդհանուր հանրության իրազեկման բարձրացմանը և առավելագույն ներգրավմանը՝ ԵՄ կողմից ընդունված զարգացման ծրագրերին համընթաց և ի կատարումն մտավոր սեփականության իրավունքների կիրարկման գործում ՀՀ քաղաքականության և բարեփոխումների ծրագրերի:

Բաղադրիչներ:

Բաղադրիչ I՝ Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքի կատարելագործման ենթակառուցվածքի ամրապնդում
Բաղադրիչ II՝ Հիմնական շահառու կողմերի համար մտավոր սեփականության իրավունքների կարողությունների հզորացում
Բաղադրիչ III: Մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ իրազեկության բարձրացում

Ձեռք բերված արդյունքներ

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա)Մտավոր սեփականության իրավունքների հետ կապված ենթակառուցվածքների ամրապնդման վերաբերյալ առաջարկություններ- մշակվել են Կեղծարարության և ծովահենության ՀՀ դիտորդական խմբի և ՀՀ մտավոր սեփականության գործակալության կառուցվածքի և իրավասությունները, ավարտվել է համապատասխան Հայաստանի օրենսդրության բարեփոխումները,

բ)դատավորները, դատարանի աշխատակիցները և դատախազները վերապատրաստվել են Մտավոր սեփականության իրավունքի օրենսդրության, պրակտիկայի, հետաքննության, վկայությունների և վճիռների ոլորտում,

գ) մաքսային և ոստիկանության աշխատակիցների համար անցկացվել են դասընթացներ ԵՄ լավագույն փորձի և աշխատանքային մեթոդների վերաբերյալ, կեղծ և օրիգինալ ապրանքների տարբերակների վերաբերյալ: Մշակվել են համապատասխան ձեռնարկներ և տեղեկագրքեր մասնագետների համար,

դ) վերապատրաստվել են պետական և մասնավոր հատվածներից հեղինակային իրավունքի 47 մասնագետներ ,

ե)ՀԱՅՀԵՂԻՆԱԿը , որպես ռոյալթիների հավաքագրող կազմակերպություն ամրապնդեց իր կատարումը և ընդլայնել համագործակցությունը այլ ռոյալթի գործակալությունների հետ,

զ) մշակվել է ՓՄՁ ձեռնարկը,

է) մշակվել են ծովահենության դեմ պայքարի և մտավոր սեփականության իրավունքների իրականացման ձեռնարկներրը, ինչպես նաև հեղինակների իրավունքների վերաբերյալ մեթոդական ուղեցույցներ: